ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 55

ք. Երևան 29.05.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Ռետինափողրակներ, վառելիքի լիցքավորիչներ, վառելիքի պոմպերի մասեր, քիմիական լաբորատորիայում կիրառվող սարքերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «**ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/16**» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից):

12.04.2023թ.-ին կայացած նիստում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում արձանագրել է անհամապատասխանություններ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ առաջարկելով վերջինիս մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

14.04.2023թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Մասնակցի կողմից չեն շտկվել 12.04.2023թ.-ին ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից որևէ շտկված փաստաթուղթ չի ներկայացվել, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջը՝ որոշել է Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին անբավարար և մերժել վերջինիս հայտը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ